070.1
Տ-45

ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՅԵՎ
ԲԱՆԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԿՈՆՍՈՒԼՏԱՆՏԻՆ՝ «ԼՐԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՈՐԻԱՆ ՅԵՎ „ՊՐԱԿՏԻԿԱՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳԾՈՎ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ԿՈՄՈՒՆԻՍՏ» ԹԵՐԹԻ

Բագու 1940

15190

07.01
Մ-45

23 JUN 2009

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

## ԿՈՆՍՈՒԼՏԱՆՏԻՆ՝ «ԼՐԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՈՐԻԱՆ ՅԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳԾՈՎ

Համկ(բ)Կ Կենտկոմի վորոշումով կազմակերպվում է ձեռնարկությունների, կոլխոզների, հիմնարկությունների պատի թերթերի խմբագիրների և բանգյուղթղթակիցների մասսայական ուսուցում։

«Բոլշևիստսկայա պեչատ» ժուռնալին հանձնարարված է կուրսանտների համար գրականություն, տեղեկատու նյութեր յեվ մեթոդական ձեռնարկներ հրատարակել։

Հաշվի առնելով, վոր ուսման կազմակերպման ամբողջ աշխատանքը կատարվելու յե տեղերում, քաղաքային, շրջանային և բազմատիրաժ թերթերի խմբագրություններին կից, «Բոլշևիստսկայա պեչատ» ժուռնալը յուրաքանչյուր բրոշյուրի հետ միասին կոնսուլտանտների համար մանրամասն մեթոդական նամակ է ուղարկելու։ Մեթոդական նամակներում նշված է լինելու, թե ինչպես պետք է պարապմունքները տանել, ինչպես պատրաստվել կոնսուլտացիաներն անցկացնելու, թե կոնսուլտանտն ինչպիսի գրականության պիտի ծանոթանա։

Այս նամակում մենք ուզում ենք կոնսուլտանտներին ծանոթացնել [illegible] թեմատիկ պլանի հետ,

26.06.2013

նույնպես և մեթոդական ու կազմակերպական բնույթի մի քանի խորհուրդներ տալ, վորոնք խմբագրությունների աշխատողներին պետք է օգնեն «Լրագրական աշխատանքի թեորիան և պրակտիկան» դասընթացի գծով պարապմունքներ անցկացնելու:

## ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՑԵՎ ԲԱՆԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

## ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԸ

Թեմատիկ պլանում օրիենտիր կերպով նախատեսվում է հրատարակել հետևյալ բրոշյուրները.

ա) Բրոշյուրներ լրագրական աշխատանքի թեորիայի ու պրակտիկայի գծով.

«Աշխատավորների կոմունիստական դաստիարակությունը և պատի թերթերի խնդիրները», «Պատի թերթի աշխատանքի կազմակերպումը և բովանդակությունը», «Ինչպես գրել թղթակցությունները», «Ինչպես ուղղել թղթակցությունները», «Պատի թերթի ձևավորումը», «Ինչպես ինքնուրույն կերպով աշխատել գրքի վրա»:

բ) Բրոշյուրներ լավագույն պատի թերթերի փորձի մասին.

«Պատի թերթի մասսայական — քաղաքական աշխատանքը», «Պատի թերթն աշխատանքի առաջավոր մեթոդների համար մղվող պայքարում» (գյուղական տնտեսության, արդյունաբերության մեջ), «Պատի թերթը և կուլտուրայի հարցերը»,



«Ինչպես է պատի թերթն օգնում արտադրական պլանի կատարմանը», «Պատի թերթի ակտիվի հետ տարվող աշխատանքի փորձը», «Ամենօրյա պատի թերթի աշխատանքի կազմակերպումը», «Պատի թերթը բերքահավաքի ժամանակ»:

գ) Բրոշյուրներ կուսակցության ընթացիկ քաղաքականության հարցերի և առորին մամուլի կոնկրետ խնդիրների գծով:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

### «ԼՐԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՈՐԻԱՆ ՑԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳԾՈՎ

| ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՈՒՆԸ | Բրոշյուրների քանակը | Ինքնուրույն աշխատանքի ժամերի քանակը | Կոնսուլտացիայի ժամերի քանակը | ԸՆԴԱՄԵՆԸ ԺԱՄԵՐ |
|---|---|---|---|---|
| 1. Լրագրական աշխատանքի թեորիան և պրակտիկան . . . . | 14 | 280 | 46 | 326 |
| 2. Կուսակցության ընթացիկ քաղաքականության հարցերը և մամուլի կոնկրետ խնդիրները . . . . . . | 3 | 60 | 14 | 74 |

Տեղական թերթերի խմբագրությունների միջոցով կանոնավոր կերպով կուրսանտներին բրոշյուրներ կուղարկվեն ինքնուրույն ուսումնասիրության համար: Կոնսուլտանտի խնդիրն է օգնել պատի թերթերի խմբագիրներին ու թղթակիցներին նրանց ինքնակրթության գործում, սովորեցնել նրանց իրենց պրակտիկ աշխատանքում ստացած գիտելիքները կիրառելու պատի թերթերում:

## ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԱՆՑԿԱՑՆԵԼ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ

Պատի թերթերի խմբագիրների ուսման ամենօրյա ղեկավարությունը պետք է լինի տեղական թերթերի խմբագրությունների աշխատանքի օրգանական մասը, պատի թերթերն օպերատիվ կերպով ղեկավարելու ձևերից մեկը: Իսկ դրա համար անհրաժեշտ է, վորպեսզի կոնսուլտացիաները կանոնավոր անցկացվեն (ամիսը յերկու անգամ) ամբողջ տարվա ընթացքում: Սիստեմատիկ պարապմունքների դեպքում կոնսուլտացիայի ղեկավարը վոչ միայն կարող է լավ ուսումնասիրել մարդկանց և օգնել նրանց՝ վորոշակի գիտելիքներ ձեռք բերելու, այլև հետևել, թե ինչպես են նրանք այդ գիտելիքները կիրառում իրենց աշխատանքի մեջ՝ պատի թերթերում:

Ուսումը հաջող անցկացնելու համար պետք է հենց սկզբից սահմանել կոնսուլտացիաների կայուն կարգացույց: Անհրաժեշտ է «Բոլշևիստսկայա պեչատ» ժուռնալից բրոշյուրներ ստանալուն պես



բաժանել կամ ուղարկել կուրսանտներին, թույլ չտալով, վորպեսզի այդ բրոշյուրները մնան խմբագրատանն ընկած:

Պարապմունքները պետք է սկսել ճիշտ նշանակված ժամին: Կոնսուլտացիաների համար հարկավոր է ապահովել լավ շենք, ուսումնական գրատախտակ, կավիճ և այլն:

Կոնսուլտացիաների համար հատկացված սենյակում օգտակար է կախել կուրսանտների լույս ընծայած պատի թերթերի վերջին համարները և ունենալ մամուլի հարցերին նվիրված ժուռնալները:

Ամուր ուսումնական կարգապահությունը և պարապմունքների վորոշակի կարգն զգալիորեն կբարձրացնեն ուսման արդյունավետությունը: Նպատակահարմար է ընտրել դասընթացների ավագ, վորը կոնսուլտանտին օգնի պարապմունքներն անցկացնելիս:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Հյուսիսային և արևելյան մարզերի սակավարնակ շրջաններում կոնսուլտացիաները կարելի յե անցկացնել ավելի հազվադեպ (համաձայնեցնելով ՀամԿ(բ)Կ մարզկոմի կամ յերկրկոմի հետ): Այդ շրջաններում պետք է յերկու ամիսը մեկ անգամ հրավիրել 2–3-օրյա սեմինարներ, կամ կոնսուլտացիաները անցկացնել ամիսը մեկ անգամ:

# ՊԵՏՔ Է ՄԱՆՐԱԶՆԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՅԻՆ

Կոնսուլտանտը պետք է ուշադիր կերպով ծանոթանա ուղարկված բրոշյուրի հետ յեվ նշի այն հանգույցային հարցերը, վոր պետք է լուսաբանվեն կոնսուլտացիայի ժամանակ: Յուրաքանչյուր թեմայի համար հարկավոր է լրացուցիչ գրականություն կարդալ: Այդ գրականության հետ ծանոթանալը կոնսուլտանտին կօգնի ավելի վստահ անցկացնել պարապմունքը, ավելի հետաքրքիր կազմակերպել այն, ավելի լրիվ ու ավելի ճշգրիտ պատասխանել կուրսանտների հարցերին:

Տեղական պայմաններն իմանալը ղեկավարին կթելադրի, թե ինչպես, վոր հարցերը պետք է առանձնապես մանրամասն քննել կոնսուլտացիայի ժամանակ: Յեթե, որինակ, պատի թերթերում վատ է լուսաբանվում ստախանովականների աշխատանքի փորձը, ապա բնական է, վոր այդ հարցին ավելի մեծ ուշադրություն պետք է հատկացնել, քան մյուսներին: Հետեվաբար, անհրաժեշտ է, վոր կոնսուլտանտը լավ իմանա իր ձեռնարկության, իր շրջանի պատի թերթերը, իմանա դրանց դրական և բացասական կողմերը:

Պատրաստվելով պարապմունքների համար, կոնսուլտանտը, բրոշյուրներից ու գրքերից բացի, ձեռքի տակ պետք է ունենա կուրսանտների լույս ընծայած պատի թերթերը: Հարկավոր է հոգալ, վորպեսզի կուրսանտները վաղորոք, մինչև հերթական կոնսուլտացիան, ուղարկեն պատի թերթերի վերջին համարները և իրենց կատարած կոնտրոլային աշխատանքները:



Կոնսուլտանտը պետք է ուշադիր կերպով ծանոթանա կուրսանտների պատի թերթերում հանդիպող թերությունների և կոնտրոլային աշխատանքներում նրանց թույլ տված սխալների հետ: Դրանց մանրամասն անալիզը կթելադրի կոնսուլտանտին, թե նա բրոշյուրի վոր բաժնի ուսումնասիրմանը պետք է հատուկ ուշադրություն դարձնի:

Անհրաժեշտ է, վորպեսզի կոնսուլտանտը նախորոք մշակի այն հարցերի ձեվակերպումը, վոր նա պիտի տա կուրսանտներին: Հարցերը պետք է այնպես դընել, վորպեսզի դրանք բարձրացնեն ունկնդիրների հետաքրքրությունն ու ակտիվությունը: Միևնույն հարցը կարելի յե ձեվակերպել տարբեր ձեվով: Այսպես, որինակ, փոխանակ կուրսանտին հարցնելու, թե ինչպիսին պետք է լինի պատի թերթի աշխատանքի պլանը, ավելի լավ է մանրամասն քննել նրա կազմած աշխատանքի պլանը և դիտողաբար ցույց տալ, թե ինչպիսի թերություններ կան նրա մեջ, ինչպես պետք է կազմվի պատի թերթի աշխատանքի պլանը:

## ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԵԹՈԴԸ

Կարիք չկա կոնսուլտացիայի ժամանակ բարձրաձայն կարդալ բրոշյուրը: Կուրսանտները պարտավոր են նրա բովանդակությանը ծանոթանալ տանը:

Կոնսուլտացիայի ժամանակ կուրսանտները պետք է բացատրություններ ու պատասխաններ ստանան իրենց մոտ ծագող բոլոր հարցերի նկատմամբ, կարդացածն ամրացնեն հիշողության մեջ և ցուցումներ ստանան՝ ձեռք բերած գիտելիքները պրակտիկ աշխատանքում կիրառելու մասին:

Շատ կարևոր է ստորին մամուլի աշխատանքներին սովորեցնել քննադատորեն քննելու ինչպես իրենց, այնպես էլ ուրիշ պատի թերթերը: Ուստի պարապմունքների ժամանակ պետք է կուրսանտներին մասնակից անել իրենց լույս ընծայած թերթերի քննարկմանը — իհարկե, յուրաքանչյուր անգամ նկատի առնելով ուսումնասիրվող բրոշյուրի թեման ու բովանդակությունը:

Օրինակ, նախ քան «Ինչպես է պատի թերթն օգնում արտադրական պլանի կատարմանը» բրոշյուրի գծով կոնսուլտացիաների անցկացումն սկսելը, կոնսուլտանտը պետք է ծանոթանա, թե ինչպես է այդ թեման դրվում կուրսանտների լույս ընծայած պատի թերթերում: Այնուհետև, առանձին պատի թերթերը քննելիս, կոնսուլտացիայի ժամանակ, նա պետք է ցույց տա, թե այդ հարցը լուսաբանելու գործում ինչպիսի թերություններ կան այդ պատի թերթում: Առանձնապես մանրամասն պետք է պատմել պատի թերթերի դրական փորձի մասին:

Այն բանից հետո, երբ մի քանի կուրսանտ արտահայտվել են շոշափված հարցի շուրջը, կոնսուլտանտը հանրագումար է տալիս:



Կոնսուլտացիան այդ եղանակով անցկացնելիս ղեկավարի դերն ամենևին չի նվազում: Ընդհակառակը, կենդանի զրույցը, բրոշյուրի նյութի յուրացման ստուգումը հմտորեն զրույցի հետ զուգակցելը կոնսուլտանտից պահանջում է վորոշ պատրաստություն, նախաձեռնություն, լրջմիտ վերաբերմունք դասընթացներում սովորող յուրաքանչյուր ընկերոջ նկատմամբ: Այդպիսի մեթոդով կոնսուլտացիա անցկացնելն ավելի օգտակար է, քան ամբողջ յերկու ժամ խոսես ինքդ, կամ ամբողջ կոնսուլտացիան հասցնես դրված հարցերին կուրսանտների պատասխանները լսելուն:

Կոնսուլտանտի յեզրակացությունը պետք է ընդհանրացնի կուրսանտների արտահայտությունները և օգնի նրանց՝ հիշողության մեջ ամրացնելու ուսումնասիրվող բրոշյուրի գլխավոր դրույթները:

Կոնսուլտացիայի վերջում պետք է համառոտակի պատմել հետևյալ պարապմունքների թեմայի մասին:

Նայած թեմայի բնույթին, ձեռնարկության, շրջանի յուրահատկությանը, կուրսանտների գիտելիքների մակարդակին, — պարապմունքներն անցկացնելու մեթոդը կարող է փոխվել: Յեթե, օրինակ, ձեռնարկության մեջ արտադրական պլանը չի կատարվում, օգտակար է պարապմունքներից մեկում դնել ձեռնարկության դիրեկտորի զրույցը կուրսանտների հետ՝ արտադրական պլանի կատարման համար մղվող պայքարում պատի մամուլի և բանգյուղթղթակիցների խնդիրների մասին:

# ԲՈԼՇԵՎԻԿՈՐԵՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ՍՏՈՐԻՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

Մի տարվա ուսման հետևանքով պատի թերթերի խմբագիրներն ու բանգյուղթղթակիցները կստանան վորոշ չափով հատուկ գիտելիքներ յեվ ունակություններ: Սակայն կոնսուլտացիայի ղեկավարը վոչ մի րոպե չպետի մոռանա ընկեր Ստալինի խոսքերն այն մասին, վոր «բանվորական և գյուղական թղթակիցներին ժուռնալիստական տեխնիկայի վորոշ մինիմումի սովորեցնելը, իհարկե, անհրաժեշտ է: Բայց հիմնականը դրա մեջ չէ: Հիմնականն այն է, վորպեսզի բանվորական ու գյուղական թղթակիցները սովորեն իրենց աշխատանքի ընթացքում և իրենց մեջ մշակեն ժուռնալիստ-հասարակական գործչի այն բնազդը, առանց վորի թղթակիցը չի կարող կատարել իր միսիան և վորը չի կարող պատվաստվել ուսման վորևէ մի արհեստական միջոցով այդ բառի տեխնիկական իմաստով»: («Ռաբոչի կորրեսպոնդենտ»-ի աշխատակցի հետ ընկեր Ստալինի ունեցած զրույցից: Տպագրված է «Ռաբոչի կորրեսպոնդենտ» ժուռնալում, № 6, 1924 թ):

Պետք է ձգտել նրան, վորպեսզի յուրաքանչյուր կոնսուլտացիա պատի թերթերի խմբագիրներին յեվ բանգյուղթղթակիցներին գիտելիքների վորոշ գումար տա: Ամեն մի շրջանի ձեռնարկությունների կամ կոլխոզների կյանքից կոնկրետ որինակներով կուրսանտների մեջ պետք է դաստիարակել բոլշևիկյան



սկզբունքայնություն և անհաշտվողություն հետամնաց և խորթ հայացքների նկատմամբ, բոլշևիկյան զգոնություն, զգայունություն և ուշադրություն մարդկանց նկատմամբ, պատասխանատվության խորը գիտակցում թերթի աշխատանքի համար:

Այստեղ մեծ է կոնսուլտանտի դերը: Նա պետք է ստորին մամուլի աշխատողներին սովորեցնի ճշտորեն գնահատել նրանց շրջապատող իրականության փաստերը, կուրսանտների մեջ ճաշակ ծավալել նոր թեմաների նկատմամբ, պատի թերթի համար նոր հարցերի նկատմամբ, մշտապես ընդլայնել սովորողների մտահորիզոնն ու հետաքրքրությունը:

Նոր թեմաները, նոր հարցերը կուրսանտի մեջ պահանջ կառաջացնեն նրան հետաքրքրող թեմայի շուրջը հոդված կամ գեղարվեստական աշխատություն կարդալու: Կոնսուլտանտը պետք է կարողանա հարկավոր գրքույկը հանձնարարել, պատմել նրա նշանակության մասին, հաղորդել նրա բովանդակությունը:

Պատի թերթի խմբագրին և բանգյուղթղթակցին պետք է վարժեցնել կանոնավոր կերպով կարդալու կենտրոնական, մարզային և շրջանային թերթերը. չէ վոր թերթը պատի թերթի համար նոր մտքերի, նոր թեմաների աղբյուր է: Թերթը կարդալով, կուրսանտը կարող է իր համար յեզրակացություն հանել՝ ահա այս ինչ նյութը պետք է ոգտագործել պատի թերթում, այսինչ դեպքի կամ վորոշման մասին պետք է թղթակցություն գրել և այլն:

Յուրաքանչյուր պարապմունքին կարելի յե 10–15 րոպե հատկացնել կոնսուլտանտի հաղորդմանը թերթերի վերջին համարներում տպագրված այս կամ այն հետաքրքիր նյութի մասին: Պատի թերթի խմբագիրը միշտ պետք ե տեղյակ լինի ընթացիկ քաղաքական իրադարձություններին:

Կոնսուլտանտը պետք ե նաև հետևի, վորպեսզի բոլոր կուրսանտները զբաղվեն քաղաքական ինքնակրթությամբ; ինքնուրույն կերպով ուսումնասիրեն Համ Կ(բ)Կ պատմությունը:

Անհրաժեշտ ե խմբագիրներին և բանգյուղթղթակիցներին պատմել պատի թերթերի աշխատանքի հետաքրքիր մեթոդների ու ձևերի մասին, վոր լուսաբանվում են «Ռաբոչե-կրեստյանսկի կոռրեսպոնդենտ» ժուռնալում, կուրսանտների մեջ հետաքրքրություն առաջացնել դեպի այդ ժուռնալը, կազմակերպել նրա բաժանորդագրությունը:

Այդպես ուրեմն, կոնսուլտանտի առջև դրված խնդիրները մեծ են և պատասխանատու: Նա լրագրային գործի թեորիայի ու պրակտիկայի վոչ թե լավ դասատուն ե: Կոնսուլտանտը պատի թերթերի խմբագիրների ու բանգյուղթղթակիցների քաղաքական ղեկավարն ու դաստիարակիչն ե:

Կոնսուլտացիաներ անցկացնելը չի կարելի վստահել թույլ պատրաստված աշխատողների: Ավելի լավ ե չընկնել կոնսուլտացիոն կետերի քանակության հետևից, սակայն դրա փոխարեն ստորին մամուլի աշխատողների ուսումն ապահովել վորակավոր ղեկավարությամբ: Չե վոր, վերջին հաշվով, հենց կոնսուլտանտի պատրաստվածությունից են կախված թե ուսման վորակը և թե դրա արդյունքները:



## ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿ ՊԱՐԱՊՈՒՆՔՆԵՐԸ

Յուրաքանչյուր բրոշյուր կուրսանտներին վորոշակի քանակությամբ պրակտիկ առաջադրություններ ե տալիս: Կատարված պրակտիկ առաջադրություններից վոչ մեկը ղեկավարի կողմից առանց ստուգման չպետք ե թողնվի:

Պրակտիկ պարապմունքների համար տրված առաջադրությունները պետք ե ամեն կերպ բազմազան դարձվեն: Չպետք ե դրանք հանգեցնել միայն պատի թերթ լույս ընծայելուն: Ոգտակար ե կուրսանտներին նաև ուրիշ առաջադրություններ տալ, որինակ, նախապատրաստել համարի պլանը, կազմել պատի թերթում այս կամ այն կարևոր հարցը լուսաբանելու պլանը, նկարի համար բացատրագիր տալ, ընտրել համար ծաղրանկար և այլն:

Պրակտիկ առաջադրությունների նյութը պետք ե կոնկրետ ու հրատապ լինի, վոր բղխի այն հերթական խնդիրներից, վորոնց կատարման համար պետք ե պայքարի պատի թերթը տվյալ ձեռնարկությունում, տվյալ կոլխոզում:

Պրակտիկ առաջադրությունների հիմնական մասը կուրսանտներին պիտի տրվի տան համար: Իսկ յե-

թե հնարավորություն կա, ցանկալի է, որպեսզի կուրսանտը որոշ պրակտիկ առաջադրություններ կատարի հենց տեղն ու տեղը, կոնսուլտանտի ներկայությամբ: Հասկանալի է, զրույցը և պրակտիկ առաջադրությունները պետք է սերտ կապված լինեն իրար հետ և համապատասխանեն ուսումնասիրվող բրոշյուրի բովանդակությանը: Ցանկալի է նաև, այնտեղ, ուր այդ հնարավոր է, շրջանային թերթի կամ բազմատիրաժի խմբագրատանը կուրսանտների համար կազմակերպել 3-5 օրյա արտադրական պրակտիկա:

## ՕԳՆԵԼ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻՆ—ՏՆԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ

Շատ կուրսանտներ ինքնուրույն ուսման հմտություն չունեն: Կոնսուլտանտը պետք է օգնի նրանց՝ կազմել տնային աշխատանքի պլանը, ցույց տա նրանց, թե ինչպես պետք է բաշխել բրոշյուրի նյութը՝ այն որոշ ժամանակում ուսումնասիրելու համար: Պետք է պարզաբանել կուրսանտներին, թե ինչպիսի նշանակություն ունի պարապմունքների պլանաչափությունը: Ժամանակը ճշտորեն հաշվելու համար կուրսանտը վաղօրոք պետք է իմանա, թե յե՛րբ կվերջանա մեկ բրոշյուրի ուսումնասիրությունը, յե՛րբ նա կձեռնարկի մյուս բրոշյուրի ուսումնասիրությանը:

Կոնսուլտանտը պետք է ուշադրությամբ նայի կուրսանտների տետրակները, նրանց գրությունները



ու կոնսպեկտները, պարապմունքներին քննության առնի առանձին կոնսպեկտները: Շատ կարևոր է կուրսանտների համար կազմակերպել վորակավորյալ պրոպագանդիստի դասախոսություն ՀամԿ(բ)Կ պատմության ինքնուրույն ուսումնասիրման մասին:

Կուրսանտներին նրանց ինքնուրույն աշխատանքի մեջ օգնելու համար «Բոլշևիստսկայա պեչատ» ժուռնալը կհրատարակի «Ինչպես ինքնուրույն աշխատել գրքի վրա» բրոշյուրը:

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԼՐԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋ ՔԱՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ձեռնարկություններում և կոլխոզներում քիչ բանգյուղթղթակիցներ չկան, վորոնք գործնական աշխատանքի քաղաքական մեծ դպրոց են անցել, շրջանային, մարզային և կենտրոնական մամուլում աշխատելու մեծ փորձ ունեն: Այդ մարդկանցից, վորոնք նվիրված են իրենց հայրենիքին և Լենին-Ստալինի կուսակցությանը, քաղաքային, շրջանային յեվ բազմատիրաժ թերթերի խմբագրությունները պետք է պատրաստեն վորակավոր լրագրական աշխատողներ:

Խմբագրական կոլեկտիվի կողմից ամենօրյա օգնության առկայության, ուշադիր և հոգատար վերաբերմունքի դեպքում առաջ քաշվածները դառնում են լրագրական լավ աշխատողներ:

Շատ կարևոր է այդ ընկերների համար քաղաքային կամ շրջանային թերթի խմբագրատանը կազմակերպել մի ամսվա արտադրական պրակտիկա՝ կուրսերով արտադրությունից (պրակտիկայի պլանը կըմշակվի լրացուցիչ կերպով), կազմակերպել նույնպես և լրացուցիչ պարապմունքներ հանրակրթական առարկաների գծով:

Այդ բոլոր միջոցառումների շնորհիվ ուսումնական տարվա վերջին խմբագրությունը լավագույն բանգյուղթղթակիցների թվից կստանա թերթում աշխատելու համար միանգամայն պատրաստված մարդիկ:

Լավագույն բանգյուղթղթակիցների ազգանուններն ու բնութագրերը, որոնց խմբագրությունը նշում է թերթում աշխատելու համար առաջ քաշելու, պետք է հայտնել «Բոլշևիստսկայա պեչատ» ժուռնալի խմբագրությանը:

## ՈԳՆԵԼ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻՆ-ԲԱՆԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՄԲԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ

Յուրաքանչյուր ձեռնարկությունում, կոլխոզում, սովխոզում և հիմնարկությունում կան պատի թերթերի խմբկոլների տասնյակ անդամներ ու բանգյուղթղթակիցներ: Նրանք ևս սիստեմատիկ ոգնության կարիք ունեն: Կուրսանտներին պետք է հանձնարարել ուղարկված բրոշյուրն ուսումնասիրելուց հետո կազմակերպել նրա կոլեկտիվ ընթերցումը



ու քննությունը պատի թերթի ամբողջ խմբկոլեգիայի և բանգյուղթղթակիցների կողմից: Կոնսուլտանտը պետք է հետաքրքրվի, թե ինչպես են ընթանում այդ ընթերցումները, և կուրսանտներին օգնի կոլեկտիվ պարապմունքներ կազմակերպելու գործում:

## ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Կոնսուլտանտը պետք է սիստեմատիկաբար ստուգի, թե ինչպես է յուրացված բրոշյուրի նյութը: Միայն այն ժամանակ կարելի յե բրոշյուրը յուրացված համարել, յերբ կուրսանտները կսովորեն ստացած գիտելիքները կիրառել պրակտիկայում իրենց պատի թերթը լույս ընծայելիս:

Անհրաժեշտ է գիտելիքների ստուգումն ոգտագործել՝ պատի թերթում աշխատանքն ավելի լավ կարգավորելու գործում յուրաքանչյուր սովորողին ոգնելու համար: Ըստ որում անհրաժեշտ է զգայուն անհատական մոտեցում կուրսանտին, որպեսզի նա գիտելիքներն ստուգելու մեջ ռեալ ոգնություն զգա կոնսուլտանտի կողմից:

Առաջադիմության գնահատականի համար հիմնական նյութ պետք է լինեն կուրսանտների լույս ընծայած պատի թերթերը և նրանց գրած թղթակցությունները: Առաջադիմությունը գնահատելիս գլխավորապես պետք է հաշվի նստել այն բանի հետ, թե ինչպես է կուրսանտը կարողացել ստացած գիտե-

ւեքները գործադրել իր պրակտիկ աշխատանքում՝ թերթը լույս ընծայելու համար: Յուրաքանչյուր պարապմունքի վերջին կոնսուլտանտը պետք է նշի ամեն մի կուրսանտի աշխատանքի վորակն առանձին–առանձին:

Կուրսանտներին պետք է նախազգուշացնել, վոր ուսումնական տարվա վերջին նրանք պետք է անցած առարկաներից քննություն տան:

Դա, ըստ էության, պատի թերթի խմբագրի հաշվետվությունը կլինի ֆաբրիկա-գործարանային կամ շրջանային թերթի ընթերցողների ու խմբագրության առջև այն մասին, թե ինչպես է նա սովորել, ինչպես է կարողացել ստացած գիտելիքներն օգտագործել իր աշխատանքի մեջ:

***

Սրանք են այն ընդհանուր ցուցումները, վոր պետք է նկատի ունենա յուրաքանչյուր կոնսուլտանտ:

Կուրսանտների հետ պարապմունքների մեթոդիկայի հարցերի վերաբերյալ ավելի մանրամասն ցուցումներ կտրվեն յուրաքանչյուր ուղարկվող բրոշյուրում:

Ամեն տեսակի դժվարության վերաբերյալ, վորոնք, հնարավոր է, կհանդիպեն ստորին մամուլի աշխատողների ուսումը կազմակերպելու և անցկացնելու ժամանակ, անհրաժեշտ է դիմել «Բոլշևիստսկայա պեչատ» ժուռնալին կից պատի թերթերի խմբագիրների և բանգյուղթղթակիցների դասընթացներին (Մոսկվա, 7, Սուշչևսկայա փողոց, տուն 21):



Տեխ. խմբագիր՝ Ռ. Արզանյան

Сдано в набор 2-IV—40 г. Подпис. к печати 16—IV—40 г.
Колич. печат. знаков 31120. Колич. печ. листов 5/8

Главлит № 3055 Зак. № 1128, Тираж 500
Тип. «III Интернационал», Баку. ул. Саратовца-Ефимова, 29.

ՀՀ Ազգային գրադարան
NL0141103

15190

ԶՐԻ

# МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ

**Консультанту по курсу**
**„Теория и практика газетной работы“**